Այսպէս հանգուցեալ Դանիէլ վարդապետ Շահնազարեանցի կազմած ցուցակից դուրս, աւելացել են այլ և 700 ձեռագիրք և ոչ մէկը պակասած չէ։ Առանց Վեհափառ Հայրապետի թոյլտուութեան ոչ միայն ձեռագիր դուրս տանել անհնար է, այլ և ոչ մի տող արտագրել որ և է ձեռագրից։ Գրադարանն այնպիսի հոկողութեան ներքոյ է, որ միայն յոյժ ճարպիկ անհաւատարիմ այցելուներից կարող է կորուստ ունենալ, որպիսիք էլ դժուար թէ պատահեն։ Իսկ պ. Կ. Նման անձանց հաղորդածներն ոչ թէ ճշմարտութեան, այլ կամ խմբագրութիւնքը սխալեցնելու և կամ Ս. Աթոռիս պատիւը շոշափելու և նորա մատենադարանին վնասելու ցանկութեան միայն վերաբերելի են։ Այդ պատիւն անբարեմտաց վայելելու միշտ տուած է։

ԱԶԴ

Ըստ բարձու Իրամանի Նորին Սրբութեան Վեհափառ Հայրապետի Աղգիս ծանուցանի թէ՝ այնոքիկ խնդրագիրք, որք մատուցեալք են Նորին Սրբութեան զկնի անցեալ օգոստոս ամսոյ՝ վասն մուծանելոյ զանուանս խնդրատուացն յընդհանուր ցուցակ ուսուցչաց կամ ուսուցչուհեաց եկեղեցական—ծխական ուսումնարանաց Հայոց, մնալոց են առանց հետևանաց ցվերջ ներկայ ուսումնական ամի, քանզի յիշեալ խնդրատուք համաձայն հրահանգութեան Նորին Սրբութեան՝ տուեցելոյ Թեմական Առաջնորդաց՝ պարտ էին փութալ հասուցանել զխնդիրս իւրեանց առ Նորին Վեհափառութիւնն ոչ անագան քան 31ն յունիսի անցելոյ։